ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՆՈՐ ԷԱԿ

Նկարիչ Արամյանը, որ հայտնի էր աղջիկների և կանանց մեծ ժողովրդականություն ստացած իր մի շարք նկարներով, բաց անելով իր բնակարանի դռանն ամրացված փոստարկղը, այլևայլ թղթակցությունների թվում գտավ նաև մի ծրար՝ արտասահմանյան դրոշմներով: Բաց անելով ծրարը, նա այնտեղից զարմանքով հանեց իր ամենահռչակավոր «Մեր աղջիկը» նկարի հանրածանոթ հրատարակությունը՝ փոստ-քարտի վրա տպված: Փոստքարտի վրա ոչինչ գրված չէր: Այնուհետև նկարիչը ծրարից հանեց մանր ու վարժ ձեռագրով մի նամակ: Հետաքրքրությունը գրգռված, նա սկսեց կարդալ.

«Հարգելի պարոն Աշոտ Արամյան.

Ներփակ ուղարկում եմ ձեզ՝ ձեր իսկ նկարած աղջիկը, որ պատահաբար գնել էի մի քանի ամիս առաջ: Դեռ երեկ ես արհամարհանքով կմերժեի հազար դոլլար, եթե առաջարկեին այդ սանթիմանոց փոստքարտի համար: Իսկ այսօր ինքս եմ շտապում ազատագրվել դրանից:

Նախապես ասեմ՝ հիմք չունեք վիրավորվելու, որովհետև ես սքանչացած եմ ձեր նկարով: Չնայած դրան, ինձ անհրաժեշտ է զրկվել դրանից: Ոչնչացնել, բնականաբար, չէի կարող: Եվ ահա միտք հղացա վերադարձնել ձեզ: Մեկը՝ հրատարակված տասնյակ հազարավոր օրինակներից, այս օրինակը ձեզ համար կարող է որոշ արժեք ներկայացնել այն բանով, որ դրա վրա նայել և մտածել, հուզվել և տանջվել է մի մարդ՝ ձեր սահմանից դուրս, հազարավոր մղոններով ձեզանից հեռու…

Ես հարուստ մարդ չեմ, բայց իմ խնայած համեստ գումարները միշտ տրամադրել եմ Եվրոպայի նշանավոր պատկերասրահներն այցելելու և դիտելու — ես սիրում եմ նկարչությունը: Ես եղել եմ բոլոր մեծ և ոչ մեծ պատկերասրահներում, աշխարհահռչակ նկարները տեսել եմ իրենց օրիգինալներով: Կնոջը պատկերող բոլոր քիչ թե շատ նշանավոր գործերը ես գիտեմ: Ես գիտեմ և՛ «Մոննա Լիզան», և, օրինակ՝ «Անցյալի տեր կինը» կամ «Կապույտ հագած կինը»: Ես գիտեմ բազմաթիվ վեներաներ, մադոննաներ, ամազոնուհիներ, հավերժահարսեր, նայադներ, նիմֆներ, սալոնների մարգարիտներ, հարեմների աստղեր, դղյակների տիրուհիներ, պարուհիներ, գնչուհիներ... Սալոմե, Հուդիթ, Կլեոպատրա, Սահդա, Մեսալինա, Ղովտի աղջիկները, Փարավոնի կինը, գազաններին սանձահարողը, ֆլամանդական նկարիչների երնջաձև կանայք, նոր նկարիչների վշտահար աղջիկներ, որ իրենց հավիտենական սիրո նշանն են բերում իրենց թաղված սիրեցյալների սառն արձաններին…

Բազմաթիվ, բազմազան նկարներ, յուրաքանչյուրն առանձնահատուկ և ինքնատիպ, տարբեր և չկրկնվող... Միայն թվարկումը կգրավեր նամակի շատ շատ էջեր:

Եվ, ի պատիվ ձեզ, պարոն Արամյան, պետք է ասեմ, որ դուք կանանց այդ համաշխարհային գալերեայում ավելացրել եք ձեր ինքնուրույն նկարը:

Թող չվիրավորվի ձեր համեստությունը, պարոն Արամյան, որ ունեք անկասկած: Ես ձեզ չեմ համեմատում մեծ վարպետների հետ, չեմ հավասարեցնում նրանց: Ես ասում եմ միայն ձեր նկարի մասին:

Դուք այստեղ անշուշտ հակասություն կգտնեք, բայց ես իսկույն բացատրեմ այն:

Ձեր նկարը կլասիկ նկարչության օրինակների չափ արժեքավոր է ոչ թե ձեր հանճարի շնորհիվ, այլ այն օբեկտի, որին պատկերել եք: Հանճարը դուք չեք, այլ՝ նա: Բավական էր ունենալ նկարչական որոշ շնորք և բարեխղճություն՝ կտավի վրա հարազատորեն դրոշմելու համար այն, ինչ գոյություն ունի իրապես: Իսկ դուք այդ շնորքը և մանավանդ՝ բարեխղճությունն ունեք, իհարկե:

Դուք կարող եք զարմանալ: Չէ՞ որ յուրաքանչյուր նկարիչ ձեզ նման պատկերել է իր ժամանակն ու մարդկանց, իր ժամանակակից կնոջը: Եվ յուրաքանչյուր նկարչի հավասարապես անհրաժեշտ է՝ լինել տաղանդավոր: Ինչո՞ւ ուրեմն դուք, ընդունակություններով նրանցից շատերից ցածր, ինձնից ստանում եք այդպիսի բարձր գնահատական:

Հարցը, ընկեր Արամյան, իր ժամանակի կնոջը պատկերելու մեջ չէ, այլ այն բանի, որ ամեն մի նկարիչ այդ կնոջ մեջ աշխատում է դնել կնոջ մասին ունեցած իր իդեալը: Առասպելական կամ վերացական էակների նկատմամբ ավելի ազատ, ռեալ կանանց և մանավանդ պորտրեների նկատմամբ ավելի սահմանափակված, այնուամենայնիվ նա ամեն տեղ դնում է իր բարձր ու ազնիվ ձգտումները: Բարձր ու ազնիվ, որովհետև մեծ արվեստագետը չի կարող լինել ստոր և չար, այլանդակ և մարդատյաց: Նրա իդեալները պատկանում են բոլոր ժողովուրդներին, բոլոր ժամանակներին:

Եվ ահա, դուք ապրում եք այնպիսի դարաշրջանում և այնպիսի երկրում, որտեղ իրականացել են ձեր նախորդների իդեալները: Իդեալական կինը, որի անորոշ ուրվականն էին որսում նրանք իրենց հանճարեղ երևակայությամբ և աշխատում մարմնավորել, այժմ ստացել է իրական ձևեր, կենդանի գույներ, ապրում է ձեր շուրջը, ձեր կողքին: Ձեզ նույնիսկ չի կարելի գովել հաջող մոդել ընտրած լինելու համար: Դուք հնարավորություն ունեք նկարել համարյա թե առաջին իսկ պատահած աղջկան, որովհետև նոր էակը, որին պատկերել եք դուք, ոչ միայն երևակայական պատկեր չէ, այլ նույնիսկ սակավ հանդիպող ու նորաստեղծ անձնավորություն չէ, որին դուք փնտրել եք: Նա ձեր աղջիկն է, ինչպես ինքներդ եք անվանել:

Տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի առավելություններ ունեք դուք ձեզանից առաջ գոյություն ունեցած նկարիչների նկատմամբ: Ոչ, մի վշտանաք, որ դուք տաղանդով ցածր եք նրանցից— դուք ամենաերջանիկն եք:

Չկարծեք, իհարկե, թե ես ժխտում եմ հանճարի արժեքը և ուզում եմ ասել, որ եթե նկարչի նյութը բարենպաստ է և շնորք վերցնող, ապա նկարիչը կարող է բավարարվել միջակ ընդունակությամբ: Ընդհակառակը, նայելով ձեր նկարին, ես ապշում եմ այն մտքից, թե որքան առավել մեծարժեք կլիներ այն, եթե դուք ունենայիք իսկական հանճար: Ձեր նկարն այն ժամանակ չէր ունենա իր հավասարը:

Ներեցեք, հարգելի պարոն, որ ես, չլինելով արվեստագետ, ուզում եմ արվեստի մասին ունեցած իմ մի քանի խորհրդածություններին մասնակից անել ձեզ՝ արվեստագետիդ: Իմ կարծիքով, և իհարկե ոչ միայն իմ կարծիքով, արժեքավոր է այն արվեստագետը, որ գոյություն ունեցող գործերի վրա ավելացնում է մի նորություն, նկարված կանանց վրա ավելացնում է մի նոր տեսակի կին: Արդեն իսկ այդ յուրահատկությամբ նկարիչը կլինի արժեքավոր: Բայց որքա՛ն ավելի արժեքավոր կլինի նա, եթե նրա նկարած կինը ոչ միայն նոր լինի այն իմաստով, որ եղածների վրա ավելացնի ևս մի նոր տիպ, այլ ավելացնի հատկապես լավագույն տիպ, ավելացնի բոլորից բարձրը, իդեալականը:

Բայց ո՞րն է իդեալականը, ո՞րն է ընդհանրապես՝ ամենամեծ իդեալը՝ պիտի հարցնեք դուք: Մի վախենաք, պարոն, ես ձեզ չեմ ձանձրացնի երկարատև ճառերով, ես ձեզ կասեմ՝ մի խոսքով — աշխարհի պատմության բոլոր իսկական մեծերը, արվեստագետ, թե գիտնական,

հրապարակախոս, թե զորավար, ձգտել են մի իդեալի, որ մարդկությունը նյութապես և հոգեպես ապրի ավելի լավ: Ինչ որ դուրս է մնում այս իդեալից, ուղղակի կամ գոնե անուղղակի չի ձգտում դրան, ապա դա ստոր է, թշնամական է, հակամարդկային է և վաղ թե ուշ ենթակա է մահացման: Բոլոր մարդիկ պիտի ապրեն հավասարապես լավ, իսկ տղամարդը և կինը պիտի լինեն ընկերներ…

Սպասեցեք, ես գտա ամենաճիշտ բառը՝ ընկերուհի: Ես այդպես կանվանեի ձեր նկարը: Նայեցեք ինքներդ — ավելորդ մի գտնեք այդ անել: Գուցե նկարելիս դուք չեք էլ գիտակցել, թե ինչ եք նկարում: Նայեցեք այժմ և դիտեցեք իմ աչքերով, կողմնակի մարդու թարմ հայացքով: Եվ ասացեք՝ կարո՞ղ եք պատկերացնել այս աղջկան որևէ կասկածելի ռեստորանի խցիկում ձեզ հետ ընթրելիս, որին ինչպես հանդիպել եք քիչ առաջ, պատահաբար, այնպես էլ պիտի ազատ արձակեք քիչ հետո՝ այլևս չհանդիպելու համար…

Ոչ, վայրկենական հաճույքի ցանկություն չէ, որ առաջացնում է նա դիտողի մեջ, այլ մշտական կապի, նվիրվածության, սիրո, կյանքի դժվարությունները միասին հաղթելու և կյանքի հաճույքները միասին վայելելու: Այս աղջիկը կարող է լինել միայն կյանքի լավագույն ընկերուհի: Ես կասեի ուրիշ կերպ՝ միայն այս աղջիկը կարող է լինել կյանքի լավագույն ընկերուհի:

Ի դեպ, այս է պատճառը, որ ես այնպես կապվել էի ձեր նկարին: Պատահական գեղեցկուհիների նկարներին նայում ես, հիանում և անցնում, իսկ այս մեկն ուզում ես միշտ ունենալ քեզ մոտ: Աննշան մանրմասնություն է, բայց թող հայտնի լինի ձեզ՝ ես չունեմ կյանքի ընկերուհի:

Ես կուզենայի ևս մի բառով ասել իմ կարծիքը ձեր նկարի մասին — գեղեցիկ: Բայց ի՞նչ է գեղեցկությունը: Ի՞նչ է այդ՝ կարծես թե անըմբռնելի հասկացողությունը, որն այնքան բազմատեսակ է և յուրաքանչյուրի մոտ տարբեր, որ կարծես չունի ոչ մի կանոն, ոչ մի օրինաչափություն: Ամբողջ աշխարհով շրջող բազմաթիվ ասացվածքներն այդպես էլ ասում են՝ գեղեցկության հարցում չկա չափ ու կշիռ:

Ես չգիտեմ ինչ կարծիքի եք անձնապես դուք, բայց լսեցեք իմ դատողությունները: Գուցե որևէ բանով պետք գան դրանք ձեզ:

Գեղեցիկն օգտակարի ծնունդն է: Պոչն օգտակար է ձիու համար, ուստի և այն մեզ թվում է գեղեցիկ: Համաձայնվեցեք, որ ոչ մի հանճարեղ նկարիչ գեղեցիկ չէր կարող դարձնել անպոչ ձիուն: Անթև մարդը նույնպես, այլանդակ դուրս կգար ամեն դեպքում:

Մյուս կողմից, երբ օգտակարությունը դադարում է գոյություն ունենալուց, մեռնում է նաև նրա զավակը՝ գեղեցկությունը: Եվ, ինձ համար դեռևս անհասկանալի օրենքների համաձայն, սկսում է գեղեցիկ դառնալ նախկին գեղեցկության բոլորովին հակառակը: Նախամարդուն, լավ լսելու և հոտոտելու համար, անհրաժեշտ էին մեծ ականջներ և քիթ: Այժմ մենք դուրս ենք եկել կիսագազանի կյանքից և մեզ համար գեղեցիկ են փոքր ականջներն ու քիթը: Մեզ հարկավոր չեն խոշոր ատամներ՝ հում միս կրծելու, մեզ հարկավոր չեն մազեր՝ մարմինը տաք պահելու: Եվ մենք պաշտամունքով ենք նկարում կնոջ մանրիկ ատամները, մարմնի մաքուր մաշկը... Բայց աչքերը, կենդանի էակների այդ ամենաթանգ գանձը, որ տրված է մեզ՝ աշխարհը, այդ թվում նաև նկարիչների նկարները դիտելու համար, հարկ է, որ լինեն խոշոր, և խոշոր էլ դուր են գալիս նրանք մեզ: Լայն ճակատը նշան է մեծ ուղեղի՝ իր ետևում, և լայն էլ դուր է գալիս նա մեզ:

Եվ գեղեցկությունն իհարկե անշարժ հասկացողություն չէ: Դեռատի աղջկա կրծքի վրա փոքրիկ ստինքներն են գեղեցիկ, իսկ մայրացած կնոջ՝ լիքը ստինքները:

Ես կարծում եմ, ընկեր Արամյան, որ այսպիսով կարելի է սահմանել գեղեցկության գոնե ամենատարրական օրինաչափությունները: Բայց իզուր եմ բանակովի ձևով ասում դրանք: Գուցե դուք համաձայն եք ինձ հետ:

Դրանից հետո արդեն, սկսվում է այն, որի մասին ազատորեն կարող եք ասել՝ չկա չափ ու կշիռ: Շե՞կ մազեր, թե՞ սև, գուցե շագանակագո՞ւյն: Մոխրագո՞ւյն աչքեր, երկնագո՞ւյն, կանա՞չ, թե՞ նորից սև կամ շագանակագույն: Բարձրահասակ և նրբակա՞զմ աղջիկ, թե՞ միջահասակ և լիքը: Բարակ շրթունքնե՞ր, որ ստեղծված են ժպտալու, թե՞ ուռուցիկ շրթունքներ, որ ստեղծված են համբուրելու համար: Ճիշտ է ասված՝ որքան մարդ՝ այնքան ճաշակ: Բայց ասված է թերի: Յուրաքանչյուր մարդուն տված է ոչ թե մի ճաշակ, այլ մի քանի, շատ, անհաշիվ: Կարելի է հիանալ և՛ շիկահեր ու կապուտաչյա նրբակազմ աղջկանով, և՛ սևահեր ու սևաչյա լիքը աղջկանով, և՛ միլիոնավոր ուրիշներով: Ո՞րն է այնուամենայնիվ, ամենագեղեցիկը՝ եթե ոչ բոլորի համար, գոնե յուրաքանչյուրի... Մի՞թե մարդը պիտի հավիտյան պտույտ գա բազմաթիվ գեղեցկությունների, շատ հրապույրների, տարբեր աղջիկների միջև՝ առանց կարողանալու որոշել ամենագեղեցկին:

Ամենագեղեցիկը նա է, որին սիրում ես: Սերն է, որ արևի շողի նման ընկնում է սաղարթների համահավասար ստվերի մեջ կանգնած շատ աղջիկներից մեկի վրա և լուսաճաճանչ է դարձնում նրան: Սերն առանձնացնում է նրան իր ընկերուհիներից, բարձրացնում է վարդագույն ամպի թևերի վրա և բերում նրան դեպի քեզ: Ամպը մշուշում է մյուս աղջիկներին, աչքիդ առջև այժմ կանգնած է միայն նա՝ քո սիրեցյալը:

Ճիշտ այդպես էլ, հարգելի պարոն Արամյան, արվեստագետի հանճարն է փնտրում և բարձրացնում մերթ այս աղջկան, մերթ՝ մյուս: Ձեր աշխարհահռչակ Լև Տոլստոյն ասում է, որ հեղինակը պետք է բռնի ընթերցողի վզակոթից և տանի նրան՝ ուր որ ուզում է: Այո, արվեստագետը հարկադրում է իր ճաշակը, համոզում է, որ գեղեցկության լավագույն տիպարն իր հերոսուհին է՝ այսպիսի մազերով և աչքերով, այսպիսի ձայնով ու շարժումներով, այսպիսի հասակով ու կազմվածքով…

Ձեր նկարը, պարոն Արամյան, նույնպես հանդիսանում է ձեր ճաշակի արգասիքը: Եթե լինեիք հանճարեղ, դուք անշուշտ կհամոզեիք ինձ, որ ամենագեղեցիկ աղջիկն աշխարհում, դա ձեր նկարածն է՝ հարդագույն մազերով, մոխրագույն աչքերով, միջահասակ, լիքը կազմվածքով և այլն: Բայց որովհետև դուք ընդամենը համեստ շնորքի տեր նկարիչ եք, ապա իմ ճաշակը համարձակվում է շարունակել մնալ ինքնուրույն, ես շարունակում եմ մտածել այնպես, որ չկան ավելի գեղեցիկ մազեր, քան բաց-շագանակագույնը, ավելի գրավիչ աչքեր, քան շագանակագույնը, ավելի հմայիչ մաշկ, քան համարյա շագանակագույնը…

Եվ ի՞նչ... Չնայած դրան, ձեր նկարած աղջիկը դարձյալ մնում է լավագույնը աշխարհում, լավագույնը բոլորից, որոնց տեսել կամ երազել եմ երբևէ: Չկա՞ արդյոք հակասություն իմ ասածների մեջ: Օ, ոչ, պարոն:

Այն, ինչը որ ամենալավն է դարձնում ձեր աղջկան, ավելին է, քան մազերի և աչքերի գույնը կամ արտաքին այլ բարեմասնությունները: Այն, ինչը որ կա ձեր աղջկա մեջ, ճիշտ այդպես կարող է գերազանց դարձնել և՛ սևաչյաներին, և՛ կապուտաչյաներին, և՛ շագանակագույններին, որոնց սիրում եմ ես: Անմրցելի լավը ձեր աղջկա մեջ՝ դա նրա իդեալական հոգու տիպարն է: Իսկ արտաքինը՝ դա ըստ յուրաքանչյուրիս ճաշակի: Ձեր լայնարձակ ու բազմամարդ աշխարհում, ավելի քան այլուր, աղջիկներն ունեն արտաքինի անհաշիվ բազմազանություններ: Ոչ, պարոն Արամյան, նորից եմ կրկնում, մի տրտնջաք՝ եթե, իհարկե, տրտնջում եք.— դուք ամենաերջանիկ նկարիչն եք պատմության մեջ:

Գալով ինձ, ես նույնիսկ ուրախ եմ և շատ ուրախ, որ դուք մեծահանճար նկարիչ չեք: Այլապես դուք պիտի հիպնոսեիք ինձ ձեր ճաշակով, ես պիտի ձեր աղջկա հմայքն ըմբռնեի իբրև հատկապես այդ միակ աղջկա հմայքը, այդպիսի մարմնաձևեր ունեցողի հմայքը, այդ մարմնաձևերի հմայքը: Բայց այժմ ես հնարավորություն ունեմ հասկանալու ձեր նկարը, վիճելու ձեր անձնական ճաշակի հետ և մնալու երկրպագողը՝ ոչ թե ձեր, այլ ձեր երկրի իդեալական աղջկա:

Հարգելի պարոն Աշոտ Արամյան.

Մի քանի ամիս շարունակ, օրեկան մի քանի անգամ, ես երկարատև դիտում էի ձեր աղջկա նկարը և մտածում այս ամենի մասին: Նկարն իմ մեջ առաջացնում էր ծարավ, առաջացնում էր բաղձանք՝ ունենալու այդ աղջկան — ոչ թե մոխրագույն, այլ շագանակագույն աչքերով այդ աղջկան: Բայց դա միևնույն աղջիկն է, դուք, իհարկե, հասկանում եք ինձ: Եվ որովհետև գիտեի, որ այդպիսի աղջիկներ ծնվում են միայն ձեր աշխարհում, ապա երազում էի, որ կամ ես գայի ձեր աշխարհը, կամ ձեր աշխարհը գար ինձ մոտ:

Երբ արվեստը ծարավեցնում է՝ այդ շատ լավ է: Եվ, ճիշտն ասած, ուրիշ ո՞րն է արվեստի ֆունկցիան: Բայց Եվրոպայի նշանավոր գրողներից մեկն ասել է.— «Գիրքը քսաներորդ դարի հաշիշն է»: Երկար ժամանակ ես համաձայն չէի դրա հետ, մինչև որ երեկ հանկարծակի գլխի ընկա, որ ձեր աղջկա նկարն ևս, ինձ համար դարձել է հաշիշ: Այն ծարավը, որ ստեղծել էր այն՝ իմ մեջ և որն ինձ պիտի ակտիվացներ կյանքի նկատմամբ — այն ծարավն սկսել էր հագենալ այդ իսկ նկարով... Արվեստը փոխարինել էր սկսել կյանքին: Օգտակարից ձեր նկարն ինձ համար վերածվել էր վնասակարի:

Հասկանալով այդ, ես որոշեցի ետ ուղարկել ձեզ ձեր աղջկա նկարը: Դուք ոչ միայն իրավունք չունեք վիրավորվելու, այլև ուրախ պիտի լինեք, որ հասել եք ձեր նպատակին: Յուրաքանչյուր արվեստագետ, դրանց թվում, իհարկե, նաև դուք, անշուշտ նպատակ ունի լինել կյանքի ուսուցիչ, սովորեցնել՝ վերափոխել կյանքը: Որքա՛ն վատ կլիներ, եթե ես, ուսանելով ձեզանից, այնուամենայնիվ, ոչինչ չգործադրեի կյանքում և շարունակեի մնալ ձեր նկարի պասիվ երկրպագուն: Դա վատ կլիներ և՛ ձեզ համար՝ իբրև արվեստագետի, և՛ ինձ համար՝ իբրև մի մարդու, որը դեռ չունի կյանքի ընկերուհի: Ես ծարավել եմ ձեր նկարով, բայց հագենալ ուզում եմ կյանքում: Հարկավոր է մեզ մոտ ևս ստեղծել այնպիսի կյանք, որ այստեղ ևս ծնվեն ձեր նկարի վրա պատկերած նոր էակները՝ աշխարհի ամենալավ աղջիկները»…

Ստորագրություն չկար: Առավել ևս՝ հետադարձ հասցե: Ակներևաբար, նամակի հեղինակը պատասխան չէր պահանջում: Նա հարցեր չէր տվել:

Արամյանը մտածկոտ շուռ ու մուռ տվեց նամակը, ապա երկար սկսեց նայել նկարին՝ կարծես նոր էր տեսնում: Հետո ձայն տվեց կնոջը.

— Աստղիկ, կարդա այս նամակը, քեզ է վերաբերում:

1946